Վահան Տերյան

Միշտ նույն խոհերի շշուկին հլու

Միշտ նույն խոհերի շշուկին հլու,
Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝
Ես դուրս եմ գալիս նորից շրջելու
Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:

Շփոթ նվագով աղմուկ ու սուլոց
Շարժում են առաջ օրը ժրաջան
Բոցոտ խնջույքում, ձուլված խինդ ու կոծ,
Հյուսել են կյանքի կախարդված շրջան:
Հապճեպ հոսանքում և՛ մարդ, և՛ անիվ,
Ալեկոծությամբ մի խայտանկար
Խենթ փողոցների բավիղներն անթիվ
Ջրերի նման խառնում են իրար:
Ամեհի ձայնով երկաթն է խոսում,
Պողպատն է ճչում շաչյունով դողդոջ
Եվ բազմաղաղակ օրերի լեզուն
Հնչում է այստեղ, որպես մարտակոչ:

Այս աղմկահյուս կյանքի խենթ բոցում
Այրում է սիրտը սրբազան մի դող,
Հուզում է հոգիս մի վեհ հիացում,
Եվ սարսափելին՝ թվում է դյութող…
Մաշված է կյանքը վշտում անաղարտ

Եվ տառապանքի օրերում համառ,
Բայց ցաված սիրտը բացել եմ հպարտ,
Նորից ու նորից սիրելու համար:
Ուզում եմ, վաղվա ցնծության գուշակ՝
Կարոտը նետած լուսեղեն հեռուն,
Վառե՛լ երգերը, որպես դրոշակ,
Ու մեռնե՛լ, որպես հերոսն է մեռնում…

Զարթե՛ք, երգեր իմ, ժամ է հնչելու,
Ջինելու նորից գնդերը ցրիվ,
Մեռած սրտերը կյանքի կոչելու
Եվ բորբոքելու, զայրույթ ու կռիվ…